## 363. ԱՌԱԾ – ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Ագռավն ուզեց կաքավերիշ էթա, իրանն էլ
մոռացավ:
Ագռավին հարցրին՝ ղշերի միջին ո՞րն ա սիրուն,
ասաց՝ իմ ճուտը:
Ագռավին քյարվանբաշի դրին, տարավ,
քարից գցեց:
Ալ էլ հագնի՝ կստվի, շալ էլ հագնի՝ կսավի:
Ալարողի ապրանքը լաց կըլնի:
Ալմաչ արած կով հո չես:
Ալու գդակը Վալու գլխին ա դնում, Վալունը՝ Ալուն:
Ածան հավը կչկչան կըլնի:
Ածովի հողը քարին չի մնա:
Ածովի հուղն ու ասովի խոսքը մին ա:
Ակռեքը քչփորելով փոր չի կշտանա:
Ահելի աչքով աղջիկ առ, ջահելի աչքով՝ չի:
Ահը դժար ա, քանց մահը:
Ահի տարին էրակը շատ կըլի, մահի տարին՝
խաբարը:
Ալաք կերթամ՝ գլխիս կտան, հետ կաղնեմ՝
ոտիս կտան:
Աղբրների չըչորացած ջրի արժեքը չի իմացվի:
Աղջի՛կ, քեզ ասեմ, հարս, դու իմացի:
Աղջիկը, որ կա, անկտրիլ չմերուկ ա:
Աղջիկ դառար՝ լավ դըառար, հարսը դառար՝
ցավ դառար:
Աղջիկը գարի հացի խմոր ա:
Աղջիկը ուրիշի տան ճրագ ա:
Աղջկանը վաթան չկա:
Աղջկա տանը դհոլ-զուռնա, տղի տանը ձեն-ձուն
կա ոչ:
Աղջկանը որ թողնես, կերթա զուռնաչուն կառնի:
Աղջկա լավ մակն էլ մե աղջիկ արժի:
Աղվեսին ասին կճիրտ դեղ ա, ավելի խորը թաղեց:
Աղվեսի վկան իր պոչն ա:
Աղվեսը մկան բնի ա վակում:
Աղունի վրա վազող հավ հո չես:
Ամագըդ իշի քամակ:
Ամանը վեր ընգավ կոտրվեց ոչ, ամա ձենը ամենքը
իմացան:
Ամեն բան իր ժամանակն ունի:
Ամեն բան դրուստ չի ասվի:
Ամեն բանի վերջն է գովելի:
Ամեն թալաքեմեն դուս կգա:
Ամեն մարդ պեծն իր բլիթի տակն ա քաշում:
Ամեն մարդ, որ իր աշխատածն ուտի, բա քոշե՞ն
ինչ ուտի:
Ամեն մարդ իր բեդովլաթ տղին կգովի ու իր շաշ
աղջկան:
Ամեն մարդի դարդ իրա հմա մեծ ա:
Ամեն մարդ իր գլխի տերն ա:
Ամեն մարդու սրտումը մի ցավ կա:
Ամեն խաղը խաղացել ենք, մնացել ա սարի
սմրուլը:
Ամեն ծառ ղամի չի ըլիլ:
Ամեն կինտո բազազ չի դառնա:
Ամեն մի մարդու քո արշինով մի չափի:
Ամեն պլպլացող բան ոսկի չի:
Ամեն օր պապը գաթա չի ուտի:
Ամպերի տեղակ սարերն են գոռգոռում:
Ամպը գոռալու գյորա անձրև չեկավ:
Ամռան պառկեմ հովեր, ձմռան հատին կովեր:
Անալուր խաղչ էր, մնաց, որ ալրոտի:
Անբանը հաց ուտելիս առողջ ա, բանելիս՝ հիվանդ:
Անգաջը կա, ծակ կա ոչ:
Անգին քարը ցեխումն էլ գին ունի:
Անըզգամը աստուծ չունի, անգութը՝ խիղճ:
Անըզգամի հետ մատաղ ուտելու էլ մի էթա:
Անըմը տու, փետը վե կալ:
Անըմը տու, խալիչեն փոխ:
Անըմը տու, եպը դիր:
Անըմը կա, ամանըմը կա ոչ:
Անթառամ ծաղիկը թառամիլ չի, անառակը՝
պառավիլ:
Անխեխտել ձին համ իրան քարից կգցի, համ էլ
տիրոջը:
Անխեխտել քուռակն ու անդաստիարակ էրեխեն
մեկ են:
Անհունար մարդի լեզուն երկար կըլի:
Անճարը կերել ա բանջարը:
Անձրևի արևը թեժ կըլնի:
Անձրևից փախա, կարկուտի ռաստ էկա:
Անձրևը քարըմը չի տակն ունիլ, խրատը՝
հիմարըմըմ:
Անշուն գեղ ա մտել, անփետ ման ա գալի:
Անողը պրծավ, ասողը՝ ոչ:
Անսկսած ու մտեն գցած:
Անվուրթին մե դարդ ունի, վուրթատերը՝ հազար:
Անտեր մնաս դու բողազ, ինչ կտենաս՝ կդողաս:

Անտերը տերավոր, տերավորը՝ կորավոր:
Անպոչ գդալի նման մեջ կընգնի:
Անպտուղ ծառին քար գցող չի ըլի:
Անփուտ արեգակն ու լուսնյակն էլ չի:
Աշխարհը դմակ, տղեն՝ դանակ, որտեղ հասնի, կտրի:
Աշխարհը «կապա հայ կեր ա»:
Աշխարք, որ վառի, մեջ մի խորոմ խոտ չունի:
Աշխարքս փոխ հայ ա, ոնց սաս, ընենց էլ կըստանաս:
Աշխարքումը մին դու, մին էլ՝ ես:
Աշխրքումը ամեն բան կու ճարվի, բայի հորից ու մորից:
Աշնան գինին, գարնան՝ ջուրը:
Աչքն արդար լավ ա, քանց միաքը մեղավոր:
Առանց մսուրքի չի չեն առնի:
Առանց շուն գեղ չի ըլի:
Առաջ գնայողի պոչին են տալի, հետ գնայողի՝ քամակին:
Առաջ միտք արա, հետո գործ ըսկսի:
Առաջ ասեղը քեզ խրի, նոր ուրիշին:
Առաջնախոսը չգիտի, թե ետնախոսի փորումը ինչ կա:
Առըղ մարդը երգար կապրի:
Առըղի հըլար ողջը մեկ ա:
Առուն թռիր, նոր սաս հոպ:
Ապրանքն արա տերը հետը, որդին արա հերը հետը:
Առուլին էլ լող ա պետք:
Ասելը եեշտ ա, անելը՝ դժար:
Ասելն էլ յավ, չասելն էլ յավ:
Ասեմ՝ գեշ կըլեմ, չասեմ՝ էշ կըլեմ:
Ասովի խոսքը, ածովի հողը կենալ չի:
Աստվածածին արա, բակը մտի, սուրբ խաչն արա, ծակը մտի:
Աստվածածնուն տուն մտի, սուրբ խաչին սնդուն մտի:
Աստվածանա կա ոչ, մարգարեն ոնց անի:
Աստված մեկ աչքը մեկէլին մուհթաջ չանի:
Աստված, որ ագռավի չենը լսի, Վարդնորին չին կըդնի:
Աստված եղածն օրշնի:
Աստված որ չի տվե, խաչն ինչ անի:
Աստված մեկին խելք ա տվել, մյուսին՝ բախտ:
Աստված մեկին խելք ա տվել, մյուսին՝ աղամարդկություն:
Աստծու պահած գառը գելը չի ուտի:
Աստծուց մի քար կա կախված, ով իրան չգովի՝ գլխին կընգնի:
Աստված ջան, սարերը քաշի (ասվում է կարկուտ գալու ժամանակ):
Ավալի վրեն տուն չեն շինել:
Ավելի համբերությունը իշի մարտիրոսություն ա:
Ատամը հանած գել ա:
Ատամդ որ նեղացնում ա, հանի, դեն նետի:
Ատամիդ տակ ի՞նչ կա:
Արաղ խմես լավ բան չի, գինի խմես՝ խաղ կանչի:
Արի ու գիլի գլխին ավետարան կարդա:
Արջը խաղով էլավ, տանձը մտիցն ընգավ:
Արջն իրան ահիցն ա գոռում:
Արջն իրա արջ տեղովը քոթոթներին ծառ բարձրանալ ա սովորցնում:
Արևը դիպավ մեր պատին:
Արքայությունը մեր տանը (երբ արևը դուրս է գալիս՝ երեխաներն են ասում):
Արևին ասում ա՝ դու դուս գալ մի, ես եմ դուս գալու:
Աքլորը որ անժամանակ կանչի, գլուխը կկտրեն:
Աքլորին մի կանչ ա հասնըմ, ուզում ա լուսանա, ուզում ա՝ չէ:
Ափսո՜ս, շաքար՝ շան բերան:
Բաժան-բաժանությունը տուն ա քանդում:
Բախտ ունեցար՝ լեռ քարի վրա էրթաս՝ կկանաչի:
Բախտը չի բերում:
Բախտի անիվը շուռ ա էկե:
Բանը շուտ վերկենալը չի, բանը գործի հաջողությունն ա:
Բանը դրին՝ թողեց, փախավ:
Բանը չի փախչի:
Բանը՝ անելով, էշը՝ քշելով:
Բանը էգուցվա մնաց, կորավ, գնաց:
Բանը հնանա, տերը շնանա:
Բանը ուտելը չի, բանը կերածը մարսելն ա:
Բանը անելով առաջ կէթա:
Բանի անունը տալուց գլխի ցավը բռնում ա:
Բանն ով անի՝ ես ու դու, հացն ով ուտի՝ ես ու դու:
Բարատու ծառը գլուխը կախ կըգըյի:
Բարատու ծառին քար գցող շատ կըլի:

Բարեկամի հետ կերուխում արա, առ ու տուր մի անի:
Բարեկամը նեղ օրվա համար ա:
Բարեկամը չէթալ-չգալով յադասյավ, յադը էթալ-գալով բարեկամայավ:
Բարեկամայանք՝ րարեքարայանք:
Բարեկամըդ աչքիդ կնայե, թշնամիդ՝ ոտքիդ:
Բարդի ծառ ա, բար չունի:
Բարկայողը շուտ կըպռավի:
Բարև ավինք, կրակն ընգանք:
Բաղդատում էլ խուրմա շատ կա:
Բաղնիսից քրտնած դուս կըգան:
Բաշխելիս հավարը մի ափսոսա, հաշվի մեջ մի կոպեկը մի մոռանա:
Բեվախտ ղոնաղն իրան ջեբիցը կուտի:
Բերանը չես փակի:
Բերանս ցավալու տեղ, թող կուռս ցավա:
Բերանում լոբի չի թռչվի:
Բերնով ասելը հեշտ ա:
Բերնով ուպեմ, ինչո՞վ ուտեմ:
Բերանդ ջվալի բերան հո չի:
Բերնեբերան՝ մապը գերան:
Բերդն իր միջից կքանդվի:
Բլի գլխին կոնով թխիլ չեն:
Բիճ գառը երկու մոր կծծի:
Բիր ըլի, փիր ըլի:
Բոլոր թռչուններն էլ թռան, հել-հել անող չեղավ, հենց որ լորը թռավ, հել-հելը քամակը կապեցին:
Բողկը ինչքան սեյրագն ըլնի, էնքան գլուխը մեծ կըգյի:
Բոյին եմ մտիկ անըմ, խելքըս ա գընըմ,
Խելքին եմ մտիկ անըմ՝ կաիկես ա գընըմ:
Բոյը երկար, խելքը՝ կարճ:
Բոշ ջվալ, դարդակ չանախ, հա չափե, հա չափե:
Բոշի եղը որ շատ ըլի՝ քամակին կքսի:
Բուրդը քարերար ա արել:
Բուրդը խուրւե, խառնվել ա գառներին:
Բրթողը զիտի, ուտողն ինչ գիտի:
Բրուտին կուլա չի ըլի:
Բրուտը կուժ չի ունենա, ղասաբը՝ դանակ, մաշկակարը՝ չուշտ:
Գառը գելին պսի ավին:
Գառիցը շուն կըծնի, շանիցը՝ գառ:
Գարի ունես՝ քու ջիաններին տու:
Գապ մը չըքաշի, մապ մը կըքաշի:
Գարնան արևը աղջկաս վրան, աշնան արևը՝ հարսիս:
Գարնան գառն ա գովական, աշնան՝ հավը:
Գդալ-գդալ կիտեյի, շերեփ-շերեփ դուս ավի:
Գդակը մեծ, մեջը՝ դարտակ:
Գդակս թռպոտ տեսար, ջաղացպան կարծեցիր:
Գելը թողածին ա փոշման, տերը՝ տարածին:
Գելը չանգ օրն ա սիրում:
Գելը որ պառավի՝ շներու ճանգը կընկնի:
Գելը սովածությունից կարում չի դարը հելնել, ասում են շատ ուտելուցն ա:
Գելի անունն ա դուրս եկել, աղվեսն աշխարհ քանդեց:
Գելի գլխին ավետարան կարդացին, ասավ՝ թեզ արեք, ոչխարը գնաց:
Գելի բունն առանց օսկոռի ըլիլ չի:
Գելի բնում ոսկոր մնալ չի:
Գելի փորը կշտանալ չի:
Գելն ու գառը իրար հետ չեն արածի:
Գեղը կըմտնես, խաբարն էրեխիցն առ:
Գեղը քաղաքի աղեն ա:
Գեղըցին գեշ բանից հըմանչիլ չի, հեսաբից կիըմանչի:
Գեղի շունը որ քաղաք ա գընըմ, ֆարսի ա հաչըմ:
Գժեն դրուստ խոսք:
Գժին ամեն օր պատիկ ա:
Գժին քանի դիր, հետը գնա:
Գժի աղունը աստված կաղա:
Գժի թրի ջուխա բերանն էլ կտրում ա:
Գժի մե հուշտն ա պակաս:
Գժի վեգը հա ալչի ա:
Գիժը գնաց հարսանքատուն, ասաց՝ ըստեղ լավ ա, քանց մեր տուն:
Գիժը մի քար գցեց հորը, հավար խելոք կարային ոչ եանել:
Գիժը չի ամաչում, գժատերն ա ամանչում:
Գիժն ու հարբածը մեկ ա:
Գիլիսը տամապըղ չի ըլի:
Գինու սիրուն թասը կըլիկեն:
Գիտենալը շնորք չի, անելն ա շնորք:
Գիտուն աղվեսը երկու ոտով թալաք կընկնի:
Գիտունի հետ քար կրելը լավ ա, քանց անգետի հետ փլավ ուտելը:
Գիտունին մին, անգետին՝ հավար ու մին:

Գիշերվա կերածը կորած ա:
Գիշերվա սաբըրը խեր ա:
Գլորավ խուփը, գտավ պուտուկը:
Գլուխ էկած բանը քանդելը մեղք ա:
Գլուխը հասա, մեջը դարդակ:
Գող, սիրաը դող:
Գողը գիտե աշխարհ գող ա:
Գողը գողեն գողացավ, աստված վերեն կարմացավ:
Գողը որ տանու ըլի, եզը հերթիկով կհանեն:
Գողը կուզեկուզ ման կըգա:
Գողի համար բերդն ու բացարը մին ա:
Գողինը քառասուն օր ա:
Գողն իրա շվաքից հուշտ ա ըլում:
Գոմեշը քունը շինի, նոր անունը Ղուլի դիր:
Գովական ջիու վերջը բեռ կրելն ա:
Գովեցին Ալիխան, էլավ, նստեց պատուխան:
Գործը խարակ էլավ:
Գրքի երկու երեսը կարդա:
Դաբաղը հավանած կաշին հա տափովը կտա:
Դալլաքությունը իմ գլխին ա սովորում:
Դանակը որ ծալես, ջեբդ դնես՝ կըժանգոտի:
Դանակը կովի կուշտը տանելու տեղակ, կովն ա դանակի կուշտը տանում:
Դանակը ոսկորին ա հասել:
Դանակը իրա կոթը չի տաշի:
Դառը դատեց, դատարկ նստեց:
Դավեն իրան բոբիկ շատ ա տեհել:
Դավեն փալանով կուլ կտա:
Դավի խաղը կամուրջի վրեն ա բռնե:
Դարդ անողին դարդ չի պակսի, քեֆ անողին քեֆ չի սրակսիլ:
Դարդ ու խնդումն իրար ախպեր են:
Դարդ կա, կանչնի, դարդ կա՝ կէրի, կվառի, աշհե կանչնի:
Դարդակ կարասը բարձր ձեն կհանի:
Դարդն ու ցավը քաշի, մենձայրա, տուր էլողլուն:
Դարդակ կուժ էկավ առաջս, բանըս չի հաջողի:
Դարմանը քունը չի, դարմանանոցը հո քունն ա:
Դարմանի տակի ջուր:
Դարդակ փետին շուն չի հաչի:
Դե արի, էշը ցեխից հանի:
Դեղը գիտեմ, դարման չունեմ:
Դեղ ունես՝ քո գլխին արա:
Դնին դժոխք ցույց չտաս՝ արքայության ճամբեն ճանաչիլ չի:
Դերձակին ասեցին քոշի՝ ասեղը խրեց յախեն ու գնաց:
Դիոլ, կուռնի ձենը հեռվից քաղցր կգա:
Դրսում քահանա, ներսը՝ սատանա:
Դրսում ուրիշին ա վառում, ներսում՝ տիրոջը:
Դու աղա, ես աղա, բա մեր աղունը ով տի աղա:
Դու քեզ մի գովի, թո ուրիշը գովի:
Դու ինչ ուզում ես ասա, նա իրա կուռնեն ա փչում:
Դու որ սիկը բերես, ես էլ կապիչը կքաշեմ:
Դուն իմը մի ասա, որ ես քունը չասեմ:
Դուց խոսողի ձին թամքած, շեմին կանգնած պտի ըլի:
Դուց խոսքը հանաքով կասեն:
Դուց խոսուլի փափախը ծակ կըլի:
Դուշմանըդ առանց քաշալ գլուխ ըլի:
Դուռըդ փակ պահի, որ հարևանիդ գող չբռնես:
Եզը ինչ հըմար կալ չի անըմ, ուրիշի հըմար պատարագ ա անըմ:
Եզը որ ընգավ, դանակավորները շատացան:
Եզը վեր են ունում, տակիցը ֆորթ են ուզում:
Եթիմին հույս տվին, հաց չտվին:
Եթիմն ասաց՝ փառք աստծո, ես էլ ապրեցի. աստված ասաց՝ բա ես որտեղ եմ:
Եկեղինիցը (շատ անչրևից) սով կըլի, չորեքինից՝ չէ:
Եղ ու մեղրը շան տկումը:
Եղը կրակին էրվի, աեղիցը լընգալ չի:
Ես ասեմ, ես կըլսեմ:
Ես իմ դիոլը չածեմ, թե քու էշը կըխրտնի՞:
Ես ով, էս ով:
Ես ուստա, դու ուստա, բա մեր ախպը ո՞վ դուս տա:
Երաց կա օրն ա կատարվում, երաց էլ կա՝ տարին:
Երացն առաջնախոս ա:
Երգ շատ գիտեմ, ձեն չունեմ:
Երես տվին, աստառ ուզեց:
Երկաթը տաք-տաք կըծեծեն:
Երկու երնեկ մի աեղ չի ըլնի:
Երկու ջուրը, մի հաց:
Զանգակի ձենը հեռվից անուշ կգա:
Զատիկն առանց ձվի ըլիլ չի:
Զատկի ձվի պես բոլորին վարգել ա ատամին:
Զարարի կեսից ետ դառնալը խեր ա:
Զարկվողն ապրել ա, զըրկողը չի ապրի:
Զոդ ոսկին ժանգ չի բռնի:

Զոնքաշի էփած ցվածեղը համով ա:
Զոնքաշի սիրած փեսին աները ատում ա:
Զուլում անողը կուլումի կգա:
Էգուցվա բանին ցին ա էկել:
Էդ քեզ խրատ, որ էլ չըցանես կտավատ:
Էլի էն սուփրեն, էլի էն հացը:
Էծ ասա, թե չէ ոչխար շատ կա:
Էծը իծի հըմար լավ ա, քան մի սուրու ոչխարը:
Էծը իրա ոտից կախ կտան, ոչխարը՝ իրա:
Էն ծերից բռնի, որ էս ծերը քու ցեռին մնա:
Էն կալն անիծած, որ առաջնակամը կով ա լծած:
Էն կենքեմեն օչով խաբար չի բերի:
Էն հանաքին ինչ ասեմ, որ կեսը ղորթ չի ըլնի:
Էնպես մարդ ա, սրած թրից երես չի թեքի:
Էն վաղ էր, որ էշը կաղ էր:
Էնքան բոյով ես, որ առանց նարդիվան ուղտի
քամակը կպաչես:
Էշը բիհրը պոկեց, մին թե ուրիշին դիպավ, տասն՝
իրան:
Էշը էշի կշտին կապես, յա խուն աի սովրիլ,
յա խասյաթը:
Էշը մնա՝ բլի գնա, ցին մնա՝ թող գնա:
Էշը մատաղ չի ըլնի, էշագինը հո կլնի":
Էշը կդմաե, ջրին կուտե:
Էշը կորցրել են, փալանի եղնեն են ման գալի:
Էշի անգաջումը քնած ա:
Էշի բեռն ինչքան ծանդր ըլնի, էնքան արագ կէթա:
Էշի դարդը չեմ, նալչիների դարդն եմ:
Էշը վեր ընգավ, էլ վեր կենալը ադաթ չի:
Էշի հըմա հա ըսաեղ, հա Բաղդատ, մի հաշիվ ա:
Էշի յալն ու պոչը ինչքան խուզես, քուռակ չի
դառնա:
Էշին ասին հունարըդ շանց տուր, պոչը
բարցրացրեց ու մի հատ քաշեց:
Էշին չուշ մի ասի:
Էշին պոզեր դուս չէկավ, ասին խուդուխ ա:
Էշին ցեխից հանես՝ քեզ կցեխոտի:
Էշին վեր ըլելը մի այիբ ա, վեր գալը՝ երկու:
Էշն էլի էն էշն ա, փալանն ա փոխած:
Էշն ինչ գիտի՝ նուշն ինչ ա:
Էշն ինքն ա, խոտն ուրիշի առաջը կդնի:
Էշն իրան պոչիցը խռովեց:
Էշն իր սատկիլը կուզի, թաք տիրոջը վնաս գա:
Էշ ջան, մի ուտի, գարուն կգա, յոնջա դուրս կգա:
Էս թաղի դառը տանցն ա:
Էս խմորը շատ ջուր վեր կունի:
Էսօր ինձ, էգուց՝ քեզ:
Էսօրվա բանը չեն թողա էգուցվա:
Էվելի թիքեն փոր չի ծակի:
Երեխեն միանա, մերը՝ կշտանա:
Երեխեն օխտը դամարից մինը կնքավորին կգցի:
Երեխին ասին՝ ինչի ես լալիս, ասավ՝ խոսքս անց ա
կենում, ընդու հմար:
Երեխին բանի դիր, հետը գնա:
Երեսին թքեցին, ասեց՝ մայիսի անձրև ա:
Երեսն աստառից չեն կտրի:
Երեսն երեսմեն կամանչի:
Ըլնելու բանը կըլնի:
Ընգած մարդի կանգնելը դժվար ա:
Ընգածին չեն խփի:
Ընգել ա փողատերը, կանգնել ա աղատերը:
Ընենց բան ես ասում, որ էփած հավլի ծիծաղը
կըգա:
Ընենց արա, որ ոչ խորոված էրվի, ոչ՝ շամփուրը:
Ընչանք երեխեն լաց չըլի, մերը ծիծ չի տա:
Ընչանք հաց ճարեցինք, պանիրը պրծավ:
Ընչանք Շուշանը կարդարվավ, ժամ-պատարագ
արձակվավ:
Ընչանք քեզ վնաս չտաս, ուրիշի խաթրը չես առնի:
Ըռավոտահան որ տերտեր տենաս, գործըդ
թարս կըգնա:
Ըսե ջան, լսե ջան:
Ըրտասունքը ըրտասունք կբերի:
Ըրտասունքը կարար կտա աչքերին:
Ըստծու ղոնախին տուն չառնելը մեղք ա:
Թագավորն էլ թագի լայեղ պտի:
Թակա-թակա մի պուտ ջրով, որ հնացավ՝ մի փութ
ջրով:
Թակա ավելը լավ կավլե:
Թե աղջկա ու ախլի բան իս քանդի, թե մի եկեղեցի
իս քանդի:
Թամբալ եզանը մի հո՞ ա պետք:
Թամբալ եարսր հա հերանց կէթա:
Թանգից էժանը չկա:
Թանգ տարին կարբաք հագիր:
Թասը չորի հետ չեն վարի:
Թաքուն ցուլ էկողը աշկարա կծնի:
Թե առաջին գիժենա հեսին ինչ կխոսա՝ առաջին
իսկի չի խոսա:

Թեկ ճտմբա էլնողն ու թեկ կարգվողը չեն փոշմանի:
Թելը որ բարակի, կըկտրի:
Թե սոխ չես կերել, սիրտըդ ընչի ա մըռմըռում:
Թե խաչը իմն ա, կորությունը ես գիտեմ:
Թե քեզ մի վարար աղբյուր ըլնի, ինչ էլ մի ծմծման աղբյուր կըլնի:
Թե տերը ես եմ, բակլեն խաշած եմ ցանում:
Թթու ա, թան չի, ամեն մարդի բան չի:
Թո տսեն գեշ ա, թող չասեն էշ ա:
Թող իրան եղով տապակվի:
Թողնո՞ւմ են, որ աղեն հորը քաշի:
Թոկած շունը ոչխար չի պահի:
Թոկի երկտրն ա լավը, խոսքի կարճը:
Թոռը պապին ասաց. - Միրուքդ բռնեմ, սարերը ըլնեմ: Պապը թե. - Դու էլ հեսս ես:
Թրի կտրածը կըլավանա, լեզվի կտրածը չի լավանա:
Թրով չըկարածը հացով կըկտրվի:
Թուլաշուն վախտն ա, սիրոջն էլ ա կծում:
Թունդ քացախը իրա ամանը կճաքացնի:
Թուրքաքամակ մարդ ես:
Թքելը մի ամոթ ա, լիզելը՝ երկու:
Թքես գետին չի չորանա:
Ժամ քանդելը մի արին ա, սիրտ քանդելը՝ էրկու:
Ժամանակը անգին խազնա ա, գինը իմացողի հըմար:
Ժամի դուռը բաց, շանը թարբիաթ:
Ժամից ես եմ գալիս՝ «Օղորմի աստոծը» դո՞ւ ես ասում:
Իլիկ մանեմ՝ խաբար տանեմ, ջահրա մանեմ՝ դարգեր հանեմ:
Իծին թողուս՝ քարափը կըլի:
Իծի կճիպը որ քոր ա գալի, չոբանի փետին ա քսում:
Իմ բանը աջ ա, ով ուզում ա՝ հաչա:
Իմ դառը չիբուխը ծխի, արտասունք մի թափի, որ իմանամ սաղ ա աչքերըդ:
Իմացողին մին, չիմացողին՝ հազար ու մին:
Իմաստուն մեղավորը լավ ա, քան թե արդար հիմարը:
Իմ ու քուն տուն ա քանդում:
Ինատ կսնես էլերին, քամակըդ կտաս գելերին:
Ինչ աես, քեզ լաց:
Ինչ հըմար արա, քեզ հըմար սովորի:
Ինքը ըստի չի, իր փայ աստոծն ըստի ա:
Ինքը պըստիկ, լեզուն՝ մենձ:
Ինքն իրա շուքից հուշա ա ըլըմ:
Իշին ասին՝ մարիֆաթըդ ր՞աչ ա, պոչը տնկեց ու վռաց:
Իշին նստի իշավոր ա, ձիուն նստի՝ ձիավոր ա:
Իշի քամակը (կամ քնթումը) մախաթ չի կանա անց կացնի:
Իշից վեր ա ըննել, էլի «չոշ-չոշը» չի կտրում:
Ինչ անեմ ոսկի լագանը, որ մեջը արուն պտի թքեմ:
Ինչ անես, առաջըդ կըգա:
Ինչ միտն ա, են խտիտն ա:
Ինչ որ ասես, են կըլսես:
Ինչ որ բրգես, են կխրթես:
Ինչ որ ցանես, են կհնձես:
Ինչ որ տեճան՝ չեն ասի:
Ինչ տեղ ումուդ չունես՝ ընդի ա խոտ դուս գալի:
Ինչ աեսել ես՝ էլ չես տեսնի:
Ինչ չէր աեսել պաաեն կախ, աեսավ ճակտեն կախ:
Իրա գլուխը կարըմ չի կապի, ուզըմ ա հըրսանիքին հարսի գլուխը կապի:
Իրա ծառը ծարավ թողիլ, ուրիշինն ա ջրում:
Իրան եղն իրան ուսին քսեցին:
Իրանի միսը կուտեն, ոսկոռը դեն չեն գցի:
Իրանց տանը կուտ են ուտում, խալխի տանը ջու ածում:
Իրեն պաահվը չըգիտցողը ուրիշի պաահվը ինչ գիտի:
Իրեք օրվա վրեն իրեքը գիտի, իրեք օրվանից եդեն՝ աշխարքը գիտի:
Լալը լալի լեզուն շուտ կհասկանա:
Լացացնողիդ մոտ գնա, ծիծաղացնողիդ մոտը գնալ մի:
Լացը լաց կբերի, ծիծաղը՝ ծիծաղ:
Լացի վերջը ուրախութինն ա:
Լավ ա աչքով քոռ լինել, քան մտքով:
Լավ ա մի անգամ տեսնել, քան թե հարիր անգամ լսել:
Լավ աղջիկը օխտը տղա արժի:
Լավ եզը կտլում կերնա:
Լավ խոսքը սրտի գարունն ա:
Լավ կանես՝ քեզ կանես, վատ կանես՝ քեզ կանես:
Լավ կնիկը տուն ու աեղ ա, վաա կնիկը ցավ ա:
Լավ ձին գարին կավելացնի, վատը՝ դամշին:
Լավ պահի, լավ կգանես:

Լավ տանչը արջն ա ուտում:
Լավություն արա, ջուրը չգե, մի օր դուս կգա
աղաքդ:
Լավություն իմացող չկա:
Լավ օրվա բարեկամ շատ կըլի:
Լեզվի կծածը սաղանալ չի:
Լեզվիդ տակը ոսկոր չկա, որ սուտ ասելիս ծակի:
Լենին ճար կա, նեղին` ճար չկա:
Լիզվին էլ կա, չեռըմն էլ:
Լուն ուղտ դարչրիր:
Խալխը քոռ ա, չեռդ աչքիդ վրա դիր:
Խամ աչառ ա, եզ կդառնա:
Խամ հոտաղը պոտոքը կտաշի:
Խամը կոռը կվարի:
Խաշլով էրվածը մածնին կըփչի:
Խաչը տերը կորավոր կանի:
Խելքը բաժանովի չի:
Խելքը լավ ա, քան դովլաթը:
Խելք ունես` քեզ իըմա սրսհի:
Խելքից թեթևը ոտից եգին կըլի:
Խերն արել ես` կարմնջովն էլ անցկայրա:
Խերն ըստի, շառը Տրապիկոնում:
Խերն ըստի, շառը գեշ մարդու գլխին նստի:
Խնին խրատն ինչ կանի, սնին` սապոնը:
Խլնքոտ քթին ծուխն էր մահանա:
Խնամու նավը սանել չի ըլիլ:
Խոզը աղաչանքով կորեկի արտից դուս չի գալ:
Խոզի գլուխը խալիչի վրա չի կենալ:
Խոզին ինչքան պատիվ անես, վերջը դանակն ա
նրա ջանը:
Խոսքը դատողինը չի, ուտողինն ա:
Խոսքը մեծին, ջուրը` պուճուրին:
Խորթ մոր պահած ա:
Խորովածը չկերանք` ծխից քոռացանք:
Խոփըդ սուր ա, ամա եանդը բաժանովի ա:
Խոփը քարին դեմ առավ:
Խրատողին աղա չի ըլիլ:
Խունգ ու մոմով սրբերին էլ կխաբեն:
Ծածկած բերել ես, բաց-բաց տար:
Ծաղիկը ծաղկած ծառից կըթափի:
Ծակ հուլունքը գետնին չի մնա:
Ծանդր նստի, որ լիդր գաս:
Ծանդր տեղըդ մի թեթևացնի:
Ծանդր քարը տեղումը կմնա:
Ծառը մի խփելով վեր չի ընգնի:
Ծառը որ վեր ընգնի, կացնավորը կըշատանա:
Ծառը տնկում եմ, որ ինչ շվաք անի:
Ծառը քանի բար շատ ունենա, գլուխը կախ կգցի:
Ծառի պտուղը ծառի տակին կըկաթի:
Ծառից ծառատակը հեշտ կերևա:
Ծառն իրա տակին ա շվաք անում:
Ծեծը դրախտիցն ա դուս էկել:
Ծեղը գերան ես շինում:
Ծերանաս, ծերի ղադրը կիմանաս:
Ծերը պատվե, որ ծերանաս:
Ծերի արածը գտած ա, կերածը` կորած:
Ծերություն-գերություն:
Ծիտը երազում կորեկ կտենա:
Ծիտը յորեն տենալիս ականաթը աչքը չի գալիս:
Ծիտն ինչ ա, թե իրան եղն ինչ ըլի:
Ծմծման ախպուրը չի կտրվի:
Ծովը կտանի, ծարավ կբերի:
Ծովի երեսին ալյուր եմ մաղե:
Ծովն անց կայցավ, առվում խեխտվեց:
Ծովն ընգնողը թռչվելուց չի վախենում:
Ծովն ընգնողը չեռը փրփուրին ա գցում:
Ծոտոտ հավին քշո անող շատ կըլի:
Կաթ-կաթ ջուրը քար կըծակի:
Կաթի հետ մտածը հոգու հետ դուս կըգա:
Կաթնատու կովը բառաչող կըլնի:
Կաթնատու կովի նման կաթն արխաջով մին
արավ:
Կալի եզը կալիցը կստի:
Կալի եզը, որ դանը խմում ա, դունչը կապում են:
Կծու-կծու, փառք աստծու:
Կամաց քելեմ, կասեն հուռա, արագ քելեմ`
կասեն ծուռ ա:
Կամը հանեց կալեն (գործը փչացրեց):
Կաշառքը մթնում էլ լիս կտա:
Կաշառքը դատավորի աչքը կքոռացնի:
Կատվի խաղը մկան մահն ա:
Կատվի վազը մինչև մարագն ա:
Կատուն Քրիստոսի աղլուխն ա:
Կարագը հալած յուղ շինեց:
Կարասի մեջ ինչ չեն տաս, էն կլսես:
Կարկուտը ծեծած տեղն ա ծեծում:
Կարճ մարդու մտքով օրական հազար անգամ
թագավորություն ա անցնըմ:
Կարմիր չուն Զատկին կըսակի:
Կարմիր չու տուր, կարմիր օր տամ:

Կարմիր խնձոր ղարկեցին:
Կարպետը ջուրն ա տվել, եղնից վազում ա:
Կեղտդ փորումդ ժաժ ա գալի, հենց գիտես արուն ա:
Կենըմ ես, ջուրը կարմնջի գլուխն ա ըլում:
Կմեռնեմ, մեղա աստծուն չեմ ասի:
Կնգա բերանըմը տաք ջուրը գոլ չի տա:
Կնգա բերած փողը դռան կանգակ ա, անց ու դարձ անելիս ճակտիդ կդիպչի:
Կնիկարմատին էհտիբար չկա:
Կնիկարմատը սատանից իրեք օր շուտ ա ծնվել:
Կնիկ հո չի, ջրաղացի ցրթոն ա:
Կոշտը նստել ա քարի գլխին լաց ա ըլում:
Կոպեկի վիեն մուկ ա մորթում (ժլատ ա):
Կոտը գլխել ես:
Կոտրած ձուն ու կոտրած հացը չեն սաղանա:
Կոչումը կա, միջումը չկա:
Կոնատակներիդ ձմերուկ են տվել:
Կովի վերջը փոշմանությունն ա:
Կտրած հացը կպչիլ չի, կոտրած սիրտը դզվիլ չի:
Կրակի վիա յուղ լցրեց:
Կրակն ընկնես դու բողաց, ինչ կտենաս՝ կդուզաս:
Կուժը կժին խփես՝ յա մեկը կկոտրվի, յա մեկելը:
Կուժն ու կուլեն մեր գլխին ա կոտրվում:
Կուժ քի ասեմ, կուլա դու լսի:
Կուշտը սոված թին մանր կըբրթի:
Կուշա նստանք, տնոթի վեր ելանք:
Հացըր ալի տատմեր:
Հացսը որ մաց դառնա՝ չի կտրվի, հարամը որ գերան դառնա՝ կըկոտրվի:
Հախը թող տերտերին հասնի, ուզում ա մեռելը գոռբեգոռ ըլի:
Հախիջանը գիտի, թե իրան ակը դվորը թոլ կանի:
Հա, հա, յա դռանն ա, յա կտերը:
Համբերությունը կյանք ա:
Համ ձեռըմ կա, համ լեզվըմը:
Հայ-հայը գնացել ա, վայ-վայն ա մնացել:
Հայի վերջի խելքն իմն ըլեր:
Հաշված գառին գելը չի ուտո՛ւմ:
Հաց դնեմ՝ հասի, բան դնեմ՝ փախի:
Հացը հացթուխին տուր, մինն էլ էվելի:
Հացը հորից, որդին՝ փորից:
Հաց ու սրանիր, կեր ու բանիր:
Հաչող շունը կծիլ չի:
Հասած ծիրան, բաց բերան:
Հաստ ու բարակ մի գին ա, վայ բտրակ մանողին:
Հավը տանը մնա, կուտն ուտի:
Հարամը կուգա, հալալն էլ կտանի:
Հարս դառա՝ ղուլ դառա, թավի-թուլի չուլ դառա:
Հարսը գնա, էրեխեքը հետը:
Հարսը հաց թխեց, տանտիկինը պարծեցավ:
Հարսը որ անգործ ա մնում, կեսուրը կանգնացնում ա դռան տակ ու դուռը բաց ու խուփ անել տալի:
Հարստությունը անքուն կրակ ա՝ ունեցողին հանգիստ չի տալիս:
Հարցնելով Երուսաղեմ կերթան:
Հարևանի հարսը սիրուն ա:
Հարևանիդ հըմար մինը ուզի, որ աստված քեզ էրկուսը տա:
Հեռավոր խաչը զորավոր կըլի:
Հեռվի ձենը քաղցր ա:
Հին բարեկամը թշնամի չի դառնա:
Հին հարևանը բարեկամի հետ բարեբար ա:
Հիվանդը որ գնալու ըլնի, մատաղը չի օգնէ:
Հո՞ կա՝ դուս կըտանի, հո՞ կա՝ ներս կըբերի:
Հորանց տունը դաշտ ու մեյդան, մարթու տունը խորը վնդան:
Հոպոպն ինքն ա հոտած, հենց գիաե, թե բունն ա հոտած:
Հոփին թքողը, միրքին չի թքի:
Հպարտը մի օր կմտնի պարկը:
Հում կաթնակեր ա:
Հունարը արջը կալըմը լծելը չի. հունարը նրա ցեռը բռնելն ա:
Հունար ունես, գաթեն ծոցիդ պաս պահի:
Ձեռը ձեռ կըլվա, էրկուսն՝ էրես:
Ձեռքը բաց ա:
Ձի բռնեցի, տռան դուրս էկավ, էշ բռնեցի՝ կռան:
Ձկան էգն ու որձը չիմացանք, էշի՝ պառավը:
Ձկանը հարցրին՝ ծովեմեն ի՞նչ խաբար ունես, ասավ՝ շատ ունիմ, ամա բերանս ջրով լիքն ա:
Ձմերուկի մեջ մաց փնարող ա:
Ձվաձեղի խաթեր ժանգոտ թավի պոչը պաչում են:
Ձվի գող, ձիու գող:
Ձու ածող հավը կչկչան կըլի:
Ձուկ բռնողի քամակը կթրջվի:
Ձուկը գլխից ա հոտած:
Ձուկը գլխեմեն կըբռնեն:
Ձուկ բռնողը ջրեմեն չի վախենա:

Ձուկ երբ բռնես, թարզա ա:
Ձուկը ջկանը ասավ՝ դենը գնա: - Դվորը գնամ, երկուսս էլ մի թոռումն ենք:
Ձուկը ջկանը ասավ՝ դենը սրսոկի: - Որդի պառկեմ, երկուսս էլ մի թավումն ենք տապակվում:
Ձուկը ջրումը գիս չի ըլիլ:
Ձուկը ջրումը կմենչանա:
Ձունը նրա հըմսր ա գալի, որ ոտը մրսի:
Ղաբլու փլավ, հոգիս թռավ:
Ղավարը գիտե իրեն բավարը:
Ղալբ եկին մինչև ճիպոտ չտաս, չի քաշի:
Ղալբ եկին մի հո՞ ա պետք:
Ղարիբի հալը ղարիբը կիմանա:
Ղարիրի ուշքը միշտ ետևն ա:
Ղոնաղի աղաքին պանիր ու հաց, աչքդ ու ունքդ րաց:
Ղոնաղի խաթրու կասվին փըշտ չեն անի:
Ղոնաղի խաթրու շանը թաթա չեն ասի:
Ղոնաղը տանտիրոջ էշն ա, որդեղ ուզի, կըկապի:
Ղսմաթը կրընկի տակն ա:
Ղուշն իրա թևիցը քրեհ չի ուզում:
Ճամբորդի գնալն իր ձեռն ա, դառնալը՝ աստծու:
Ճանճը մի բան չի, համա որ ընկնում ա կաթի մեջ՝ թափում են:
Ճանճն ինչ ա, որ ճենճն ինչ ըլի:
Ճիճվակեր սրտղին քամին տանըմ ա:
Ճիշտ խոսողը թամքած չի պիտի ունենա:
Ճտերը աշնանը կիհամրրեն:
Ճրագն իրա տակին լիս չի տա:
Ճուտամեր կատուն գող կըլի:
Ճուտը ձըվումը մաշուր կանի:
Մալը գնա, տերը հետը, որդին գնա՝ հերը հետը:
Մախաթը մեշոկի մեջ չես սրսիհ:
Մահը մարդի անկրճին ետևին ա:
Մահը մենչ ու պսաիկ չի հարցնում:
Մահը մերն ա, մենք՝ մահինը:
Մանին ման արած, պսաիցը կախ արած:
Մանր տրեխով, մեծ ոեխով:
Սարդամիջի մարդ ունենամ, հազար թուման պարտք ունենամ:
Սարդխրանց մեջ որ էշ չըլնի, էշի գինը հազար մանեթ կըլի:
Մարդի աչքը դուս գա, անունը դուս չգա:
Մարդի նամուսը գտակն ա, կնգանը՝ լաչակը:
Մարդ մարդի քահանա, մարդ մարդի սատանա:
Մարդ կա տերտերն ա սիրում, մարդ կա՝ տերտերակինը:
Մարդ որ իր ուժը չիմանա, կոխ չի բռնի:
Մարդ շուն ըլի, տան պուճուր չըլի:
Մարդու աչքը մի բուռ հողով կկշտանա:
Մարդու մունջիկից վախի, ապրանքի կունդիկից:
Մարդու աչքը ծակ ա:
Մարդուս իրա արածը իր աչքին չի երևա:
Սարմանդ ջրից վախեցիր:
Մարտն անցավ, դարտն անցավ:
Մեծին լսիլ մի էն վախտը, որ յաղին ետևիցդ գալիս ըլնի:
Մեծ քար վերցնողը վարկելու նպատակ չունի:
Մենչն իր տեղն ունի, պստիկն իր տեղը:
Մենչ տուն, մենչ ցավի բուն:
Մեկ ձեռքով էրկու ձմերուկ չի բռնվի:
Մեկը սովել էր, իրանն էր ուտում, մեկելն էլ նրանից մի խան գարի էր ուզում:
Մեղրը մատ-մատ, չամիչը հատ-հատ:
Մեղր բաժանողը մատը կլիզի:
Մեր արխումը ջուր գա, վուրղանց գույե, թող գա:
Մեր լափն ուտում ա, ուրիշի դռան հաչում:
Մեր կուտն ուտում ա, ուրիշի բնում ձու ածում:
Մեկ ծաղկից օձը թույն ա շինում, մեղուն՝ մեղր:
Մեկ կա՝ հազար արժե, հազար կա՝ մեկ չարժե:
Մեկը մեկով, էրկուսը՝ աստծով:
Մե ձեռը մեկել ձեռան աբով չըլնա:
Մեկի աղիքն ա դուս էկել, մեկելն ասում ա՝ տուր, տանեմ կատվիս:
Մի խելքը լավ ա, էրկուսը՝ ավելի:
Մի խելքն ամառ-ձմեռ ինչ կանի:
Մի ծառից թի էլ կըլի, ֆորսըլի էլ, շան ֆուրդիկ էլ:
Մի հիմար անգին քարը ծովը գցեց, հարյուր խելոք չհանեցին:
Մի «չեն» ամեն չարիքից փրկել ա:
Մի ձեռը ծափ չի տա:
Մի սան որ էրնու տանաիկին ըլի, տախտն անավլել կմնա:
Մինը իրենց տանը շան լափ էփել չգիտեր, գնաց էջմիածնի վանքումը նստել, թե՝ խավծարար եմ:
Մինչև ոտդ թրքոտ չըլնի, բերանդ փփոթ չի ըլնի:
Մինչև ծաա ետինը, չի հիշվիլ առաջինը:
Միսը խոմ միս ա, խաշուն աչքի լիս ա:

Միս ուտող ղշի կտուցը կեռ կըլի:
Մլավան կատուն մուկ չի բռնի:
Մկան ծակը հավար թումանով ա ման գալի:
Մկան համար կատվիցը մենյ գավան չկա:
Մկան շեռը ջաղացին շահ ա:
Մովին ես եմ պահում, ղայմախը մոքիրս ա ուտում:
Մոտիկ հարևանը լավ ա, քանց հեռու բարեկամը:
Մորը թախտ, աղջկան՝ բախտ:
Մորը տես, աղջիկն առ:
Մուկն էլ ա աղանց ուտում:
Մուկը ծակը չէր մտնում, ցախավելը պոչից կապեցին:
Մուկը ծակի դռանն ա ղոչաղ:
Մուկը մի բան չի, բայց որ ընկնում ա կարասը, հարամում ա:
Մունջ կատուն շատ մուկ կբռնե, քանց խոսունը:
Յա աղն ա պակաս, յա մաղը:
Յորղանիդ գյորա ոտդ մեկնի:
Յորղանին քացի-քացի ա տալի:
Նաղին դիդի իրա սադին:
Նարդիվանս բրցացի, որ իմանամ ոտներդ սաղ են:
Ներքն չեմ նստի, վերևում էլ տեղ չկա:
Նիսիա գինին էրկու ջեր կու հարբեցնե՝ խմելիս ու փողը տալիս:
Նոր-նոր հավեր, էրկաթե ցվեր:
Նստեմ գոքդ, փետեմ միրուքդ:
Շանը քանի փետին անես, կիաչի:
Շանից մազ պոկելը խեր ա:
Շանից էլ տըմակը վեր ունելիս, մորը տես:
Շան կաղալուն մի հավատա:
Շան կծածը շան մազով կսաղացնեն:
Շան հետ ախպերացի, փետը ցեռիցդ գցիլ մի:
Շան պոչն ինչքան էլ մանգյանես, բայց թողնելուց ետը էլի չամբար կդառնա:
Շաշի ճակատին հո գրած չի ըլում:
Շաքի հաց ա:
Շատ արա, քիչ խոսի:
Շատին շատ, քչին՝ քիչ:
Շաա ծիծաղը լաց կբերի:
Շաա ման եկողը վատն ա գտնըմ:
Շտտ ման էկողի կամ գլխին կըլի, կամ ոտին:
Շաքարը անուշ ա, համա ամեն օր ուտվում չի:
Շաքարը որ ատամ ունենա, իրան կուտի:
Շիտակ խոսքը հանաքով կասեն:
Շիտակ ճամփի ման եկողը հայելումն էլ կերևա:
Շնից մազ պոկելն էլ հաշիվ ա:
Շները կռվեցին, անցորդի բանը հաջողվեց:
Շողոմքոր գառը էրկու մոր կծծի:
Շորն ասաց. «Դու ինձ պահի բողջամիջին, ես քեզ պահեմ մարդամիջին»:
Շոր տու՝ շնորքի գամ, հաց տու՝ ռանգի գամ:
Շունը գնաց ղասաբխանեն, ոտ չտարավ, ոտը կտրեց:
Շունը շալկվորին կըհաչի:
Շունը շան հաց չի կծի:
Շունը շան ոտը չի կոխիլ:
Շունը շան միս չր ուտիլ:
Շունը շան թաթ չի ծամի:
Շունը շան ոտը բաց չր թողնի:
Շունը սպանողն ա քաշ տալի:
Շուն քաշ տալն էլ փեշակ ա:
Շունն արաբի շվաքումը գնում ա, կարծում ա արաբեն ինքն ա տանում:
Շունն էլ իր տիրոջ վրա չի հաչի:
Ոնց որ Չիպկի կնիկ ըլի:
Ոչխարի դմակը իրան բեռ չի:
Ոչխարի սուրուն շուռ էկավ, կաղերը առաջ ընկան:
Ոչ հայի խունկ ա, ոչ թուրքի ուզուրլակ:
Ոչ ոք չր ասի ունքիդ վրա սև մազ կա:
Ոսկին մանդր ա, գինը ծանդր ա:
Ով ցվացեղը կերել ա, նա էլ թո հարսի կշտին քնի:
Ով ալարի, ոչ դալարի:
Ով ինչ անի, իրեն կանի:
Ով չուստ, նա կուշտ:
Ով ում կսիրե, լավը նա է:
Ոտ դրած տեղը կչորանա:
Ոտին տեղ արեց, գլխին էլ ա տեղ անում:
Որբին խրատ տվող շատ կա, հաց տվող՝ քիչ:
Որ գեշ էրազ չտեսնաս, վեր չես թոնի:
Որ էդքան արտական ես, դմակդ ո՞ւր ա:
Որցակ մի կտրի:
Որց ցին քուռակ չի ունենա:
Որտեղ հաց, էնտեղ կաց:
Որտեղ կտրվի կապը, էնդեղ էլ տքա պապը:
Չելած տեղից աստված էլ ա բեզարած:
Չեմ ուզում, ջեբս գցի:
Չըմչմակեր հարսը չելած տարին կերևա:
Չկամին կամ լծեցին, եկները հանեց սարերը:
Չոխլուխ գելը վեաս չի տա:
Չոր կեղտը մարդուն չի կպչի:

Չտեսավ պատին, տեսավ ճակտին:
Չուստ ման էկողը ճամփին կմնա:
Չուտողի մալը ուտողին հալալ ա:
Պառավն իրա թանին թթու չի ասի:
Պառավը նանա, անչրև օրը մըհանա:
Պառավի պես գառներդ ջուխա-ջուխտ հաշվիր:
Պաս ուտեմ, պաս, են էլ թանե՞ պաս:
Պարծենուըը պարկը կմտնի:
Պարտքը հնանա, տերը շնանա:
Պլիկ ես, պլտայրու:
Պղինձը շատ որ ըլնի, իրա վրեն կըթափի:
Պղինձը որ ըլչի, իր տակը կըհանգչնի:
Պղինձը վեր ընկավ, չկոտրվեց, չենը վեր էլավ:
Պռաւին ասին՝ փչի, ասեց՝ փչել էլ եմ, փորչել էլ:
Պուճուր մարդիկ մեծ երաչ կտենան:
Պուաուկն ասաց՝ ես ոսկի եմ, շերեփը, թե՝ քա ես ո՞ւր եմ:
Ջահելի աչքն իր հըմար քոռ ա:
Ջահելությունը մաշի, պառավությունը քաշի:
Ջաղաց մտնողը կալրոտվի:
Ջաղացպանը կքնի ջրաղացի չխկչխկոցի տակ:
Ջոմարդի դսդսծը նամարդն ա ուտում:
Ջրի բաժակը որ լցվի, վրայովը ջուրը կթափի:
Ջրի բերածը ջուրը կտանի:
Ջրի կուժը ջրի ճամփին կկոտրի:
Ջրին չհասած փոխկերքդ. ետ մի քաշիլ:
Ջուլհակին սրստան չի ըլի:
Ջուր կա, կարմունջ չըկա, կարմունջ կա, ջուր չըկա:
Ջուրը կտանի, ծարավ կբերի:
Ջուրը ջաղացն ա տարե, նա չախչախն ա ման գալի:
Ջուրը ջաղացի գլուխն առել ա:
Ջուրն ընկնողը փրփուրիցն ա բռնում:
Ջուրն իրա ճամփեն կգտնի:
Սամին կտա խաղաղություն:
Սատանեն մենակ կնգանից ա վախում:
Սատանի չի ա նստել, վեր գալիս չի:
Սարը սարին չի գա, մարդը մարդին կգա:
Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի:
Սարի նանը իրա թանին թթու չի ասի:
Սելավի բերածը սելավը կըտանի:
Սերը սարվորը կուտի:
Սերը սովորն ա կերե, թանը՝ մոլորը:
Սերը սովորն ա կերե, չվաչեղը՝ քավորը:
Սերն աթարիցն ա կպել:
Սպիտակ ջանը քաղնիսումը կերևա:
Սպիտակ շունը բամբակի դեզին վնաս ա:
Սիրտը որ կա՝ շուշա ա, որ կոտրվեց, էլ չի սաղանա:
Սոխի կշտին սխտոր կծեծեն:
Սոխ չեմ կերե, որ սիրտս վառվի:
Սոխ ու հաց, սիրտըդ բաց:
Սովածը հաց կըտեսնի էրազում, ծարավը՝ ջուր:
Սովածին հարցրին, որ փորըդ կշտանա, ո՞ւմ հախիցը պտի գաս, թե՝ փորս կշտացնողի:
Սոված շունը վնգստան կըլի:
Սովոր գելն ուտե, լավ է, քանց խամը:
Ստիդ ասպրակը չդստարկվե՞ց:
Ստի ոտները կարճ են:
Ստի տունը պաժառ ընգավ, չիավատացին:
Սրած թրից երես չի թեքի:
Սրի կտրածը կլավանա, լեզվինը՝ չի լավանա:
Սրտի ուզածը սիրուն կըլնի:
Սրտով քարի վրա էլ որ գնաս՝ կկանաչի:
Սուտասանը քառասուն շապիկ ունի:
Սուտ ասողի վկան կշտին պիտի:
Սուտ ասողի տունը կրակ ընկավ, չիավատացին:
Սուտը սատանեն կասի:
Սևին սապոնն ինչ անի, խևին՝ խրատն ինչ անի:
Սևն ու սպիտակը բաղնիսումը կու էրևա:
Սև սիրտ, սպիտակ ասամ:
Սև օձ տեսնողը սև թոկից էլ կվախենա:
Վազող ջուրը կեղտ չի բռնի:
Վախի գլուխը սաղ կըլի:
Վատ բանը վատ մարդից դուս կգա:
Վատ եարևանը հարևանին հաջաթատեր ա արել:
Վարդապետին ասին՝ որդիդ մեռնի. ասաց՝ ես որդի չունեմ, համա քառըդ բառ չի:
Վարը վարել ա, վարակոթը թապել ա:
Վենչի խոսքը թե լսվի էլ ոչ, գեղնին մնալ չի:
Վեր թքեմ՝ բեղս ա, վար թքեմ՝ միրուքս ա:
Վնասի կեսից ետ դառնալը հաշիվ ա:
Տալ քեզ եմ ասում, հարս դուն իմացի:
Տանելիս նոքար ես, բերելիս՝ աղա:
Տանը՝ կրակ, դրսում՝ ճրագ:
Տանը՝ հայելի, դուսը՝ ածելի:
Տանը՝ քահանա, դուրսը՝ սատանա:
Տանը՝ տեր, որդուն՝ հեր:
Տանչը կոթ ունի, մարդը՝ փուտ:

Տան կտտուն էլ սիրուն պտի ըլի:
Տան տէրտերին «օրհնյա տէր» չկա:
Տանտիկնոջ մի չեռը գող պտի ըլնի:
Տանու գողը եսը երթիկովը կհանի:
Տաշած քարը գետնին չի մնա:
Տարին բերըմ տ, ֆողը պտրծենըմ ա:
Տէրավորին տէրն ա տարե, անտէրին՝ գելը:
Տէրը տարածն էր լալի, գելը՝ մնացածը:
Տէրտէր արա՝ գեղը գյի, թե չտպրի՝ գետը գյի:
Տկլոր ջանին կատու շլակելն էր պակաս:
Տոտոն փափչի սովոր չի:
Տվածդ կաթնու գյորա քռանչի:
Տունը մերը, խոսքը մերը:
Տունը որ կրակ տաս, շորահոտ չի վեր ըլի:
Տուն չի, շտն շնթոոց ա:
Ցախավելը պոչից կապողը ցից պովեր պտի ունենա:
Ցամաք գդալը ռերանը չեն տանի:
Ցավը խտանը կքաշի:
Ցավը սարերը չեն տանում, մարդիկ են տանում:
Ցավը ցավագարին կբռնի:
Ցորեն հտց չունես, ցորնի լեզու ունեցիր:
Ուզողի մի երեսն ա սև, չտվողի՝ էրկուսը:
Ուլին քթոցի տակ չես պահի:
Ուխտ գնացինք, շան ոստ եկանք:
Ուղտը որ սատկի, կաշին մի իշաքեռ ա:
Ուղտին ասին՝ շլինքդ խի տ ծուռը, ասեց՝ ինչս ա դուզ, որ շլինքս դուզ ըլի:
Ուղտի խաղը կամրջի վրեն կքռնի:
Ում բախտը ծովեց, չին ախոռումը էշ կդառնա:
Ունեցտծ-չունեցածը որչակին բարչեցին:
Ունքը շինելու տեղ, աչքն էլ հանեց:
Ուշ արի, նուշ արի:
Ուռը քանի թեզ օլորես, լավ կոլորվի:
Ուրաքը դքա իրան կըտաշե:
Ուրիշի հըմար լացողը իրեն աչքերեն կզրկվի:
Ուրիշի չին նստողը շուտ կիջնի:
Ուրիշի մազը տեսնըմ ա, իրան գերանը տեսնըմ չի:
Փալանին նստել ա, օրվանգու ա խաղացնում:
Փախի էն ջրից, որ ոչ կըխշշա, ոչ կըֆշշա:
Փափախդ գլխիդ պահի, հա՞:
Փետե կրակ, մարխե ճրագ:
Փետը վերցնես, գող շունը կիմանա:
Փետի էրկու ծերն էլ կեղտոտ ա:
Փըսփըսոցը տուն կքանդի:
Փիադեն չիավորի վրեն ծիծաղում ա:
Փիս մարդը Ջատիկին էլ փիսը կըլնի:
Փորչած թանը լավ ա, քանց անփորչ մածունը:
Փուշը մեկ-մեկ կհանեն:
Քահանա, փիլոնդ վրեդ միանա:
Քաղցր լեզուն օձը բնից կհանի:
Քամին մարագին ասավ՝ դուռըդ բաց արա, դարման եմ բերըմ: Մարագն ասավ՝ քու բերած դարմանն ինչ պետք չէ, իմ էլածն էլ չտանես:
Քամու բերածը քամին կտտնի:
Քամու պես թեթև ես:
Քանդելը հեշտ ա, շինելը՝ դժվար:
Քանց թթվի փուփուն, թող պատռի կուկուն:
Քաշող եզանն են միշտ ճիպոտ տալի:
Քաչալը որ դեղ անող ըլի, իրա գլխին կանի:
Քավորին քյոխվա ընտրեցին, առաջին հերթին սանամորը էշին նստացրեց:
Քարայծին կխփեն աշնանը, իսկ հիմարին՝ երբ ուզես:
Քարը թոլ ա ըլըմ, չընղըլըմ, մընըմ:
Քարը քարին կերտվ, դան տու:
Քիչ բարչի, շուտ դարչի:
Քիրը գնաց քվորանց, հենց իմացավ գնաց հորանց:
Քիսեն դատարկվել ա:
Քյասիբի յորղանի նման գլուխըդ ծածկում, ոտըղ ա բացվում, ոտքդ ես ծածկում, գլուխըդ ա բացվում:
Քյոխվի վկեն գպիրն ա:
Քոլ իծուն կոտոշ չըկա, գիտեն հերվա ուլուլիկն ա:
Քոռի հըմա հա ըստեղ, հա Բաղդատ, մի հաշիվ ա:
Քոռի շաա մ́եծն ա, թե խունկն ու մոմը թանկ ա:
Քո́ռ հավքի բունը աստված կըշինի:
Քոռն ինչ կուզի, էրկու աչք:
Քչով գոհացիր, որ աստված շաա տա:
Քու չեռը տար, քու սիրտը բռնի:
Քունը քուն կբերի:
Օխտը իջի մսուրք ա ընկել:
Օխտը չափի, մին կտրի:
Օխտը քենակալ մի ճամբով գնում ին, ասեցին՝ մի մարդ էլ չկա, որ հետը խոսանք:
Օձը գնա, ճտերը հետը:
Օձը դաղչից կըփախչի, դալչն էլ օձի բնի առաջը կըքուսնի:
Օձը շապիկը կփոխի, բնությունը չի փոխի:
Օձը որ օձ ա, մարդի ջուր խմելիս չի խայթի:

Օչը տաքայնողին կկծի:
Օչի գլուխը որ յավի, ճամփումը կդնե:
Օչի կծածը կքնի, սոված քնիլ չի:
Օչի չագը տամալըը չի ըլնի:
Օչի սևն էլ անիծվի, սիպտակն էլ:
Օչի փուշը լագլագը կլմարսի:
Օչով իրա թանին թթու չի ասիլ:
Օչով չի ասի, թե ես գիժ եմ:
Օսալ կովի պես կաթը տալիս ես ու քացի տալի, վեր ածում:
Օրը գնա, բարին հետը:
Օրը գնայած, խաթեն մնայած:
Ֆորթարածի օգուտը ֆորթ խրտնայնելն ա:

## ՕՐՀՆԱՆՔ – ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹՅՈՒՆ

Այվալ բալա, որդի ունենաս ատրին վրա:
Աղ ու հայով ըլնես:
Անես օտես, անես էլ ոչ՝ օտես:
Անհատնելի հալ ուտես:
Անումով ըլես:
Աչքալուսանքով կենաս:
Ապրիս, ապրիս, կանաչ կենաս:
Ապրի որդիքդ:
Առաջնեկդ տղա ըլնի:
Աստծո բարին անպակաս ըլի և ամեն տեղի նեղ մարդուն հարեհաս:
Աստծով մխիթարվես:
Աստծու բարին քեզ:
Աստծու չեռը գլխիդ ըլնի:
Աստծու օրհնանքը անպակաս ըլնի:
Աստծու պահած գառ ըլես:
Աստված արևդ երկար սրսիհ:
Աստված բարի բախտ տա:
Աստված բանիդ, գործիդ հաջողություն տա:
Աստված բարի դուռ բանա:
Աստված դուշմանի սրտով անի ոչ:
Աստված երկար չեռդ չկարճացնի:
Աստված էլ բեթարեն ապասի:
Աստված թող ամեն մարդու սրտով իրան տա:
Աստված լուսավորի չեր անչավորպալ հոգին:
Աստված հախը նիախին չտա:
Աստված հորըդ, մորըդ գլխիդ պահի:
Աստված ղսմաթըդ հասցնի:
Աստված չենըդ լսի:
Աստված մեկդ հազար անի:
Աստված մենչի շուքը մարդու գլխուց անպակաս անի:
Աստված մի չեռը մեկելին մուխտաճ չանի:
Աստված մտքինըդ կատարի:
Աստված մուխաննաթից հեռու պահի:
Աստված մուրազըդ տա:
Աստված մուրազիդ հասցնի:
Աստված նպատակդ կատարի:
Աստված շառից հեռու պահի:
Աստված ոչ բաժանություն տա:
Աստված ոչ փոշմանություն տա:
Աստված որդիներդ պահի:
Աստված չարը խափանե:
Աստված պահի ախպերդ:
Աստված ջանիդ սաղություն տա:
Աստված վերջը բարի անի:
Աստված տա՝ չխնայի:
Աստված ուժ ու կարողություն տա:
Աստված ունեցածիդ բարաքյաթ տա:
Աստված ուտել, խմելդ անպակաս անի:
Աստված քեզ ավելի շնորք տա:
Աստված քեզ բարի տա:
Աստված քեզ երկար կյանք տա:
Աստված քեզի պահապան:
Աստված քե պահի:
Աստված քոմագ ըլնի:
Աստված քու սրտով քեզ տա:
Աստված օգնական:
Աստուծ որդիդ պահի:
Արև աշխարհի ապրես:
Արևի պես վառ ըլնես:
Արևով մեծանաս:
Արքայության փայ ու բաժին ըլնես:
Բաժանք չկատարեք:
Բալենոնցդ խերը տեսնաս:
Բախտավոր ըլնես:
Բախտավոր պսակ ըլնի:
Բարի երազ գա:
Բարի ժառանգ ըլեք:
Բարին արևուտ:
Բարի օրինակ դառնաս:
Բարչդ բարի:
Բարով գնաս, բարով եդ գաս:

Բարով հասնես թագ ու պսակիդ:
Բարով հասնես մուրազիդ:
Բարով մաշես:
Բարով վայելեք:
Բերանդ օրհնվի:
Բիլակդ ծոող չըլնի:
Բռով ցանես, մեշոկով հանես:
Գաբրել հրեշտակը հավարիդ հասնի:
Գդալով բաժանես, շերեփով ժողվես:
Գեշ մարդու չհանդիպես:
Գեշ օր չունենաս:
Գեշ օրըդ էս ըլի:
Գլուխդ բարձր պահես:
Գլուխըդ ոչ պարցին տնես:
Գնացածդ ճամբեն կանաչ·բուսնի:
Գործիդ հաջողություն, ջանիդ սաղություն:
Դարդըդ էս ըլնի:
Դարդ ու ցավ չունենաս:
Դոստըդ ուրախանա, դուշմանըդ՝ քոռանա:
Դուշմանիդ սրտով չանես:
Դուշմանիդ չուրախացնես:
Դուռըդ բացող ըլնի:
Դռանըդ վարդ, մանիշակ բուսնի:
Դրախտի փայ ըլնես:
Են փայն ուտես, ոչ կեատնի, ոչ կպակսի:
Երանի արժանանամ թագ ու պսակիդ:
Երանի բարի բախտի արժանանաս:
Երանի են ժառանգին, որ մորից ծնված կմտնի աշխարհ:
Երանի ջեռիդ հողին արժանանամ:
Երանի մուրազիդ հասնես:
Երանի տան ծնողներիդ:
Երանի քու ջեռներով հողը մանեմ:
Երգար ապրեն ծնողներդ:
Երգար ապրես:
Երգար արև ունենաս:
Երգար ումբր ունենաս:
Զավակներդ երջանիկ ըլնեն:
Զավակներդ հաջողակ ըլնեն:
Զավակներդ սաղ ջան ըլնեն:
Զավակներիդ խերը աենաս:
Զավակներիդ ջեռով հողը մտնես:
Զորանաս:
Զորանաս, ապրես, ծլես, ծաղկես:
Էս քեզ փեշքեշ հարսն ու փեսան:
Թե սաղ ա, Աստված բանը հաջողե, թե մեռած ա, օղորմի հոգուն:
Թող Աստված ցավին փրկություն տա, հային՝ էժանություն, մահին՝ թանգություն:
Թող բարին կատարվի:
Թող ջեր մինը հազար դառնա:
Թող հոգին դրախտ գնա:
Թող հոգին էթա արքայություն:
Թող հողը թեթև ըլի վրեն:
Իմ տարսը հասնես:
Ինչ պսակասեց իրանից, աստված ավելացնի իր զավակներին:
Լավ օրի տիրանաս:
Լիսը պապիդ վրա վեր գա:
Լսի փայ ըլնես:
Լուս դառնաս:
Լուս իջնի վրեդ:
Խաչը քեզ բարեխոս ըլի:
Խաս հագնես:
Խարաբա շենըդ շենանա:
Խերը տենաս:
Խոխեքդ ապրի:
Խոնարհ ըլնես:
Խոսքդ գեդին ընգնի ոչ:
Խոսքդ լսող ըլնի:
Խոսքիդ հաստատ մնաս:
Ծաղկած ծառ ըլնես:
Ծաղկած ծառ ըլես, պտուղ տվող բար ըլես:
Ծաղկես, ծիրանի դառնաս:
Ծիծաղդ էրեսիցդ անպակաս ըլի:
Ծլես, ծաղկես:
Ծննդի, կնունքի, հարսանիքի կերակուր ըլի:
Ծննդի, կնունքի, հարսանիքի հըմար ծախսես դատածըդ:
Ծնողասեր ըլնես:
Ծնողիդ լսող ըլնես:
Ծուխդ միշտ ծիրանի ըլնի:
Կանանչես:
Կանանչ կարմիրդ կապեմ:
Կանանչ ու կարմըրումը կենաս:
Կանանչ ու կարմիր օրով պառավես:
Կանանչի ումբըրդ:
Կյանքդ երկարի ջրի նման:
Կյանքիդ մեջ հեչ ախ ու վախ չքաշես:
Կյանքներս մեղրի նման քաղցր ըլի:

Կերածդ կաթը հալալ ըլի:
Կերածդ ջանիդ նստի:
Կոներդ կանանչեն:
Կտրուկ ըլնես:
Կուռըդ կտրուկ ըլի:
Կուռըդ ծռող ըլի ոչ:
Կուռըդ կանանչ մնա:
Կուռըդ, կուշտդ լիքը ըլի:
Կանանչ տախտով, կանանչ սարով ման եկող ըլես:
Կարմիր օրով պառավես:
Կյանք ունենաս:
Կանանչ ու կարմիր արևի տակ մենչանաս:
Հալալ կաթնակեր ըլնես:
Հալալ ըլնի կերածդ կաթը:
Հալալ կաթնակերի ոստ գաս:
Հալալ հաց ուտես:
Հայր Աբրահամի գոգը նստիս:
Հայր Աբրահամի բարաքաթը մեջը ըլնի:
Հայր Աբրահամի օրհնությունը վրեդ ըլնի:
Համբերող ըլեք:
Հանգստություն ոսկորներին:
Հաջողուկ ըլնես:
Հացով ըլնես:
Հարթնա Էրգյան ումբրավ ըլնես:
Հարսի հիմքը պինդ ըլի, համբերատար ըլի, խելոք ըլի:
Հեչ ախ ու վախ չանես:
Հոգին լիս դառնա:
Հոգով ուրախանաս:
Հողը բռնես՝ ոսկի վեր ունես:
Հողըդ մեր գլխից անպակաս ըլնի, մենք էլ քեզ խոնարհ ծառայենք:
Հողը թեթև ըլի, հանգստություն ոսկորներին:
Հորով-մորով մնաս:
Հունարով ըլես:
Ճակատըդ ամեն տեղ բաց ըլնի:
Ճամբեդ բարի ըլնի:
Ճամբեդ վարդ, մանիշակ դուս գա:
Ճանճ վեր չգա գլխիդ:
Ճերմակ Էրես դուս գաք:
Ճերմակ լվացք ըլի:
Մազդ չծռվի:
Մազիդ համբարքով մին ապրես:
Մարդ ապրիս, մարդ մեռնիս:
Մարդով, որդով խնդաս:
Մեծանաս:
Մեծ բարու հասնես:
Մեծի պատիվ պահող ըլնես:
Մեծի շվաքը վրեդ ըլի:
Մեծին հիշող ըլեք:
Մեկը տաս, տասը առնես:
Մեծանաս՝ կարմիր օրով, պառավես՝ կանանչ շորով:
Մեջքդ ամուր բերդ ըլնի:
Մեջքդ գեդնին տվող չըլնի:
Մեջքդ պինդ ըլնի:
Միատերը քե սրսիի:
Մի բարչի ծերանաք:
Մինը հազար դառնա:
Մին տնես, հազար վեր ունես:
Միշտ էլ ուրախ սեղանների՝ ծնունդի, կնունքի, նշանդրեքի, հարսանիքի թամադա ըլես:
Միշտ ուրախ ըլնես:
Մի սերմ գցես, հազարը վերցնես:
Նամուսով ըլնես:
Նանըդ քեզնով պարծենա:
Նանիդ ֆոքին լիս տառնա:
Ներող ըլես:
Ներսըդ ցավ չունենաս:
Նստած տեղդ էլ ղսմաթդ գա դուռըդ:
Ցաշ քաշես:
Շեն կենաս, ավադ ըլնես:
Շեն մնա հորըդ օջախը:
Շեն տան հարս ըլես:
Շենք ու շնորք ունենաս:
Շնորքով ըլնես:
Շողոմքոր ըլնես:
Շուքդ ուրիշների վրա ըլնի:
Ոտդ քարի դիպչի ոչ:
Ոտդ փուշ մտնի ոչ:
Որդեծնության արժանանաս:
Որդիքըդ հաջողակ ըլնեն:
Որդիքըդ սաղ ըլնեն:
Չարըդ խափանվի:
Չոր քարին էթաս՝ կանանչի:
Պակաս օրըդ էս ըլի:
Պապ դառնաս:
Պարզերես ըլնես:
Ջաղացիդ հերթ ըլնի:
Ջաղացիդ նոբաթ ըլնի:

Ձեռըդ լիքը ըլնի:
Ջրի պես երկան արև ունենաս:
Ջրի պես երկարես, Քռի պես լայնանաս:
Ջրի պես կուլալ բախտ ունենաս:
Ջրի պես ումրըրդ երկար ըլնի:
Սաղ ջանով բարով գաս (ասվում է կինվորին):
Սաղ ջանով մնաս:
Սեղանըդ միշտ բաց ըլնի:
Սեղանըդ միշտ լի ըլնի:
Սիմոն ծերունի դառնաս:
Սիրտդ միշտ տիենց ուրախ ըլնի:
Սրաիդ սիրածին արժանանաս:
Սրտովըդ ըլնի:
Սուփրեդ բաց ըլնի, սեղանըդ՝ լիքը:
Սփրեդ լիքը ըլնի, գան ուտեն, էթան:
Վատ օր չտենաս:
Վատ օրըդ էս ըլնի:
Վարքով-բարքով ըլնես:
Տատ դառնաս:
Տերը փրկե ամեն չարից ու փորձանքից:
Տունըդ շեն ըլնի, շեն մնա:
Տունըդ հարամ բան մտնի ոչ:
Տունըդ տատտակ ըլի, սիրաըդ ուրախ ըլի:
Տուն ու տեղըդ հարստությունով լցվի:
Ցամաք աչքով հողը մտնես:
Ցամաք աչքով պառավկս:
Ցավ ու չոռից հեռու կենաս:
Ումըր-արև ըլի քեզ:
Ուրախութենի գնաս:
Ուրախ ծերություն ունենաս:
Ուրախութենի ըլի հայըդ:
Ուրախութենի հաց թխես:
Ուրախությունով բանացնես:
Ուրախությունով հագնես:
Ուրախ ուտեք:
Ուրախության կերակուր ըլի:
Ուտողըդ շատ ըլի:
Ուր գնաս, պարվերես ըլես:
Ուրիշի մուհտաջ չըլես:
Փակ դռները առաջիդ բացվեն:
Փափախըդ գեզնովը չտաս:
Փուշ բռնես՝ վարդ դառնա:
Քաշածդ ապաշխարանք ըլի:
Օխնվի ծնված օրըդ:
Օխտը որդով սեղան նստես:
Օխտը որդու հեր դառնաս:
Օջախիդ կիակը վառ մնա:
Օջախըդ շեն կենա:
Օջախըդ հաստատ մնա:
Օղորմի անցավորներիդ:
Օղորմի հորդ:
Օրհնվիս:
Օրհնվի էկած ճամփետ:

## ԵՐԴՈՒՄՆԵՐ

Աստված վկա:
Աստված, երկինք, գետին, ծով, ցամաք գիդում չեմ:
Աստված աչքերս քոռացնի, թե գիդում եմ:
Աստված պատիժս տա, թե խաբար եմ:
Աստծու լուսը վիես չբացվի, թե իմացել եմ:
Բարի լուսը գիտենա:
Բեբելական կրակին գամ, թե արել եմ:
Բերանս ծռվի, աչքերս քոռանա, թե սուտ եմ ասում:
Գունդ ու կծիկ ըլնեմ՝ թե սուտ եմ խոսում:
Դժողքի փայ ըլնեմ, թե վեր եմ կալել:
Դու ըլնես քու աստվածը, ես տիե բան ասե՞լ եմ:
Ես, իմ աստվածը, գիդում չեմ:
Ես, իմ հոգին, դու գիտես:
Էն ժամը վկա:
Էն սուրբ ավետարանը վկա:
Էս աղ ու հացը սուտ ասոցի աչքերը քոռացնի:
Էս հացն աչքերս բռնի, թե խաբար եմ:
Էս չորսին մի գերեզման դնեմ, թե խաբար եմ:
Էս գիշեր չլիսացնեմ, թե սուտ եմ ասում:
Ըրեխիս ակիզ արևը:
Ըրեխիս էրեսը չտենամ, թե սուտ եմ ասում:
Իմ արևը վկա:
Խավարեմ, թե խաբար եմ:
Ծակծկվեմ՝ թե տեհել եմ:
Կանանչ մեռոնը գիտենա:
Կերածս կաթը հարամ ըլնի, թե աասծս անեմ ոչ:
Կրակն ընգնի, ով որ վեհիլու խոսում ա:
Հացին քոռ նայեմ, թե սուտ ա:
Հոգիս սատանի փայ ըլնի, թե սուտ ա:
Հորս արևը:
Հորս գերեզմանը վկա:
Հորս թաղեմ:

Ձեռքս կուշտ փորի չդնեմ, թե սուտ ա:
Մայրամ մայր Աստվածածինը գիտենա:
Մեղքդ վիզս, թե խաբար եմ:
Մեռնեմ, թե սուտ եմ ասում:
Մինուճարիս խերը չտենամ, թե սուա ա:
Մինուճարիս թաղեմ, թե վեր եմ կալել:
Մորս արևը:
Մորս գերեզմանը վկա:
Մորիցս վրկվեմ, թե սուտ ա:
Մուրազիս չհասնեմ, թե սուտ եմ ասում:
Նստած տեղիցս վեր կենամ ոչ, թե սուա ա:
Շնից ծնված ըլնեմ, թե ես եմ արել:
Պապանձվեմ, թե ձեն հանեմ:
Պարտական մնամ, թե խոսքիցս դուրս գամ:
Սաղ-սալամաթ գյուղ չհասնեմ, թե խաբում եմ:
Սրա (տղտյի) խերը չտենամ, թե սուտ եմ ասում:
Վալա-բիլա, խաբար չեմ:
Տուն չհասնեմ, թե ես ըտենց բան եմ արել:
Տունս քանդվի, թե ես խառն եմ էդ բանումը:
Ցավ ու չոռը վրես թափի, թե սուտ ա:
Փչանամ, քոռանամ, թե խաբար եմ:
Փողը բարձիս տակ ուտեմ, թե ճիշտ չեմ ասում:
Քոռանամ, թե տեհել եմ:
Քրքրվեմ, թե տհե բան եմ ասել:
Քու արևը գիտենա:
Օրթումս թե սուա ա, թո քոռանամ:

## ՓԱՂԱՔՇԱՆՔ

Ավիկ որդի:
Աղունիկս:
Անըմիդ մեռնեմ:
Անմեղ գառնուկս:
Անուշ ջան:
Աչքիս լիս:
Աստծու անմեղ գառս:
Արև ջան:
Բալա ջան:
Բերանիցդ ելած խոսքին մեռնեմ:
Բոյիդ մեռնեմ:
Գլխիդ մեռնեմ:
Գլխիս տեր:
Գլխովդ պտիտ գամ:
Երկանվվիկ, թափ տու ջրիկ (ասվում է երեխտյին լողտցնելիս, երբ գլխից բարչրացնելով, թափ են տալիս):
Թագտվոր ջան:
Թևավոր ղուշ ըլես, գլխիս վերևը պտիտ գաս:
Իմ աչու կուռը:
Իմ տեր ու տիրական:
Լավ օրըդ տենամ, նոր հողը մտնեմ:
Հոգուտ մեռնեմ:
Հրեշտակս:
Ձեռիդ հողին արժանանամ:
Մատաղըդ ըլնեմ:
Ոտներուդ տակը մեռնեմ:
Չարըդ տանեմ:
Ջան բալա:
Ջանիդ մատաղ:
Ջան ու ջիգյարս:
Սիրուն բալա:
Սրտիդ մեռնեմ:
Վարդի կոկոմ:
Վարդի հոտիդ մաաաղ:
Վրիդ խնկահոտին մաաադ:
Ցավդ վրես թափի:
Ցավդ տանեմ:
Քեզի մեռնեմ:

## ԱՆԵԾՔՆԵՐ

Ակարը բուկդ բռնի:
Այ դըրդագվեք դուք:
Այ կուրգ ու բուրգ:
Այ քու մեղավորը կտաղի:
Այ քու մեռելը գժվի, հա՞:
Աղջիկըդ գնա, ետ գա:
Աղջիկըդ ասնը մնա:
Աղջի, օձի րնին նսաես:
Ամագըդ շան փայ դառնա:
Ամագըդ ջուրը տանի:
Անախպեր մնաս:
Անակ սեւով քեզ տնից դուս տանեն:
Անանուն մնաս:
Անգաջներըդ խուլ ըլնի:
Անժամ, անպատարաք թաղվես:
Անեծքդ վրեդ շուռ գա:

Անծվալ ըլես դու:
Անհետ կորես:
Անհիշատակ մնաս:
Անսրտուղ մնաս:
Անջուր քարովը դիպչես:
Անունըդ քարին գրվի:
Աշխարքի էրեսին կյանք ու ումբր չունենտս:
Աշխարհիքիս հասրաթ քյնտս:
Աշկերտ ետ դտոնան:
Աշկերիտ սև-սիպտակը կդրվի:
Աշկիտ լիսը քոռանա:
Աչքդ բայ տվկաս, մեռնիս ոչ:
Աչքդ աշխտրքին կարոտ մնտ:
Աչքդ ճամբին մնտ:
Աչքդ ուրիշի էրեխեքի վրա մնա:
Աչքդ ուրիշների վրա մնա:
Աչքդ ուրիշի դոնից չկտրվի:
Ասեղը տնգես, տսկին շվտք անես:
Ասեղը տնգես, հովին նստես:
Ասեղը գավազան շինես, մորու հովին նստես:
Աստու անեծքը հասնի մեկ թեք մտիկ անողներուն:
Աստու կրտկն ու բոցը վրեդ թափի:
Աստված գլխիդ խռով կենա:
Աստված ինչ տենա, քեց տանի:
Աստուծ ջանիդ յարա աա, եղունգ չատ, որ քորես:
Ավելըդ չեռքիդ մնա:
Արածըդ ջուրը տանի:
Արածիցդ փոշման մնաս:
Արնակոլոլ ըլես:
Արնաթաթախ ըլես:
Արնաշաղախ ըլես:
Բալամ, էն օրին հասնես, որ ոտներդ կոարի,
կոներդ թուլանա, աչքերդ քոռանա, որ
քու մերը քու սատկելն ուզի:
Բալամեռ:
Բալեդ թոնիրը ընգնի:
Բալեդ թաղեմ:
Բալի քարեքար դիպչի:
Բարով հիշատակըդ աշխարհի երեսից կտրվի:
Բեբելական կրակը վրեդ թափի:
Բեմուրազ մնաս:
Բերանեդ ելածը գոգդ թափի:
Բերանըդ օրթնի:
Բերանըդ պասրսնչվի:
Բերնիցդ դուս գա, ծոցըդ թափի:
Բեոդ սեջքիցդ վեր դնես ոչ:
Բոյդ չափեմ:
Բոզանա աչքիդ լիսը:
Բշկաթելուկ տանըդ դուս գա:
Բրմոզու թուշ սրաչես:
Գեդինը մտնես:
Գեդինը պրծնեք դուք:
Գեղնազելի գաս դու:
Գելը քեզ ուտի:
Գեշ օրից հեչ աչք չրանաս:
Գժվես, թևերիդ մսերը կրծես:
Գժվես, չոլերն ընկնես:
Գիշերոց ըլես:
Գլխիդ վրա կրակ վեր գա:
Գլուխըդ քարը:
Գյարդանըդ ջարդ ու խուրդ ըլնի:
Գյոռումը ցից նստի:
Գյոռբագյոռ ըլի:
Գյոռ ու ջհանդամը էթաս:
Գյոռիդ չդադարիս:
Գյուլախորով ըլիս:
Գրիչդ չեռիդ մեռնես:
Գյուլլեն սրտիդ դիպչի:
Գոթենաս, քրքրվիս:
Գորաջախ աենաս:
Գրող ու մահ ուտես:
Գրողը բգիցդ կպչի:
Գրող ու ցավ:
Գրողը հախըդ տնի:
Գրողի դավթարն ընգնես:
Գրողի հոր ծոցը էթաս:
Գրքերդ դոշիդ շարեմ:
Գուլվադի քարումը մնաս, ջանդտքըդ դուզուննե-
րոց ըլի, ոսկոռներդ հանելու հնար չըլի:
Դանակի ասկ մնաս:
Դառը դասես, դարդակ նստես:
Դառչես, քո միսը ուտես:
Դաասածըդ բարչիդ ասկը ուտես:
Դատածըդ վերեկմանում քանայնես:
Դատածըդ աեղիդ տակին ուսես:
Դաաաստանըդ աստված անի:
Դատես, դատես, չեռըդ կուշտ փորի չդնես:
Դեղին ջրերը ջանիցըդ գնտն:
Դժողքի փայ ընենես:
Դիվոտես:

Դիվոտած հայ ուտես:
Դռանըդ մալաղոնդի տենամ:
Դոնեն դուս չելնես:
Դոնեդուռ ընգնես, հայ հավաքես:
Դոները մնաս:
Դոնից չորս ուանանին կսրի:
Դվորն անց կենաս, լավ օր չունենաս:
Դուռըդ րասյուխուփ անուղը մալաղոնդի ըլի:
Դուռըդ վեր շարվի:
Դուռըդ փակ մնա:
Դուռըդ սև քարով շարեմ:
Դուռ չքանաս, տուն չմտնես:
Եթիմ մնաս:
Են մի աչքն էլ քոռանա, որ ջլիկ պաաերը խտտելով ման գա:
Երեսըդ սևանա:
Երեսըդ ետև դառնա:
Երկինքը գլխիդ փուլ գա:
Զխկում ուտես:
Զուրկ ու բուրգ ըլեք դուք:
Էդ էլ քեզ, աստծու կրակն էլ քեզ:
Է՜, նա կառը ընկնի:
Էդ մինն ունենաս, ունենաս ոչ:
Էնքան ապրես, որ ճանճ ըլնես, պասին կպնես:
Էնքան պառավես, ասեղի տակ շվաք անես:
Էն օրն ընկնես, որ շունը ջեռիցըդ հաց չառնի:
Էն օրն սև ըլներ, որ դու աշխարհ էկար:
Էս լուսընկան քեզ տանի:
Էս պաժառ ընգածը:
Էրեսըդ սևանա:
Էրթալըդ ըլնի, գալըդ չըլնի:
Էրեխու թուշ չպաչես:
Էրեխի թաթ չբռնես:
Էրեխի կոնից պռնիս ոչ:
Ընենց օրի հասնես, որ վատ օրիդ երանի տաս:
Ընչեն պրծնես, ցավեդ ու դարդեդ չպրծնես:
Ընկրծակի գաս: (Աղեսի ենթարկվես):
Ընջիլագդ կտրի:
Թագ ու պսակի արժանանաս ոչ:
Թաժա մեռել ըլնես:
Թավալ-թավալ անես:
Թելիկ-մելիկ մեռնես:
Թերմաշ:
Թուք ու նալլաթ էրեսիդ:
Թիկունքըդ կարմիր անեմ:
Թիկունքըդ ջարդի:
Թիքա-թիքա ըլնես դու:
Թիքեն բերանումդ ուռի:
Թիքենից շաղ գա:
Թևերդ թուլանան:
Թևերդ կոտրի:
Ժառանգությունըդ երկրիցը վերանա:
Ժուռ ու մուռ մեռնես:
Ժեռ քարը վեր գա գլխիդ:
Իկըդ ու թուկըդ աշխարքեն վերանա:
Իմ տարսը չեասնես:
Իշու նիատակ ըլես:
Լավ օրըդ կռվով անց կենա:
Լավ օրի էրես չտենաս:
Լավ օրի կարոտ մնաս:
Լեզուդ րերնից մեջ ուռի, խոսալ կարենաս ոչ:
Լեզուդ լալկվի, մակըդ թափի:
Լեզուդ քոքից դուրս գա:
Լեղի խմես:
Լեն աշխարհքի մեջ նեղ ապրես:
Լիզուդ ծոծրակիցըդ դուս գա:
Լիզուդ պապանձվի:
Լիքը թասի հասրաթ մնաս:
Լուսըդ թափի:
Լուսըդ խավարի:
Լուսըդ մարի:
Խլանաս:
Խողնակը քեզ տանի:
Խոխի տեղակ կատվի լաչը լսես:
Խոսքը բերանումդ մնա:
Խոսքն իմն ըլնի, օր ծերության կուրանաս, կույր մնաս, քո ժառանգության մեջ կուրությունը ժառանգական մնա:
Ծակծկվես, դեղին ջրերը քեզանից վազեն:
Ծամըդ կտրեմ, ծոցըդ դնեմ:
Ծեռներըդ ու ոտներըդ կոտրվեն:
Ծիծը ծակվի:
Ծիծըդ ծոցիդ մեջը քրքրվի:
Ծծեմըդ փիլթա բանի:
Ծուխըդ ծխող չըլի:
Ծուխըդ մարի:
Կայծակը դոշումըդ րայ ըլնի:
Կայծակը քեզ տանի:
Կայնես միսըդ թափի, նստիս՝ ռսկռռներըդ:
Կանանչ կարմիրըդ գլխիդ սև դառնա:

Կանանչ կարմիրըդ փշին գյեմ:
Կատղես, մսերըդ ուտես:
Կարաբուղմեն խեղդի քեզ:
Կարածըդ չմաշես:
Կարկուտը վարկի քեզ:
Կարմիր գյուլլա ռաստ գա քեզ:
Կարողությունըդ տեղիդ տակն ուտես:
Կեծակի առաջին թփրեպի անես:
Կեծակ վե գա գլխիդ:
Կենդտնի մարմինըդ որթը ուտի:
Կերտծըդ հացը գլխիդ խռով մնա:
Կերածըդ հացը աչքերըդ բռնի:
Կերածըդ կաթը հտրամ ըլի:
Կերածըդ փորումըդ մնա:
Կերածըդ քթնեմեդ վե գա:
Կըռծակված:
Կիսամանգվիլ մնտս:
Կյտնքըդ արտասուքի մեջ ըլնի:
Կյանքըդ խավարի:
Կոկոմ, գերեզման դնեմ:
Կոշկես բըրդունի տառնաս:
Կողքերըդ ըլնջղա յարա բանի, տասը աեղից ծակվի, ժահրը բտնի:
Կորած մոլռածը դիպչի:
Կռնատակըդ գետինը մաշի:
Կռնատակիդ գյուլլա դիպչի:
Կտոր հացի կարոտ մնաս:
Կրակը վրադ եդ դառնա:
Կրակը ընգնի ջանըդ:
Կրակվես դու:
Կուռըդ չորանա:
Կուրանաս, պատեպատ ման գաս:
Հտյիդ հասնող չըլնի:
Հալես, հալես, ասեղի ծակովը անց կենաս:
Հայդ հարամի:
Հայը պասիժըդ տտ:
Հացիդ բարաքյաթը կտրի:
Հերդ ու մերդ շուն դառնան:
Հիտլերը ըշխարհի էրեսին լավ օր չունենար, նրա մի աչքը քոռ էր, են մինն էլ քոռանար, պատեպատ ման գար:
Հոգիդ բերտնովդ դուրս գա:
Հոգիդ դժողքումը ըլի:
Հոգիդ սատանի փայ ըլի:
Հողեմ գլուխըդ:
Հողին արժան չըլես:
Հողն ու մոխիրը գլխիդ:
Հորըդ դուռը սև քարով շարվի:
Հորըդ տունը ավիրի:
Հորըդ փայը ըլնես:
Ձենըդ փորըդ ընգնի:
Ձեռքըդ ծոցումըդ մնտ:
Ձեռքերըդ դոշիդ խաչ անեն:
Ձիու պոչերը մաշես:
Ձուն գա գլխիդ:
Ղարադարգյանի գյուլլեն վարկի բգիցդ:
Ղարա խաբարըդ առնիմ:
Ղուդալի գաս (բարձր տեղից հանկարծ ընկնես, մեռնես):
Ճավլապոկ ըլես (մազերդ փիտես):
Ճկատըմըդ մի քոռ գյուլլա դիպչի:
Ճկատիդ քոռամածուկ դիս գա, տչքդ տենա ոչ:
Ճրագըդ հանգի:
Մաղերա կտրած:
Մազերդ փետելիս տենամ:
Մահի բերանը էթաս:
Մայատ կտրե:
Մանին ման արած, պասիսը կախ արած:
Մասխարա դառնաս:
Մտրթուդ գլխին սև կյա:
Մարմինդ գույնեգույն փոխվի:
Մարմինդ թուլանա:
Մեռելդ կտաղի:
Մեռելդ շունը ուտի:
Մեռնես դու:
Մեռնես ոչ:
Մերդ մազերը վրեդ շաղ տա:
Մեր հողին արժան չըլես:
Մինուճարըդ մեռնի:
Մի չամիչը յոթը աեղից կծես:
Միսըդ ալանի չգան նման քրքրվի:
Միլիցու առաջն ընգնես:
Մտածածդ չկաաարվի:
Մորին կռաչանով քաղես:
Մորմոնջին նստես, ոտներդ գետին չհասնի:
Մուխդ մարի:
Մուրազիդ չհասնես:
Մուրազդ փորումըդ մնա:
Յոխի դավթարի գաս:
Յուրդդ քոռ մնա:

Նախանձ սիրտդ, չար աչքդ հալվի ու մաշվի:
Նաշդ նախշեմ:
Նպատակիդ չհասնես:
Նստես, նստած էրվես, կաղնես՝ կաղնած:
Նստես տակըդ էրվի, վեր կենաս՝ գլուխդ:
Նրա աչքը դուս գա:
Նրա աջու բիլագը ղինջ ըլի:
Նրա սունգը կտրի:
Շան գոխը ջուր խմես:
Շան պես սատկես:
Շանսատակ ըլես:
Շան փայ ըլես:
Շան ու գիլու փայ ըլնես:
Շառի ռաստ գաս:
Շատ դատես, քիչ ուտես:
Շները ոռնան վրեդ:
Շներոց ըլես:
Շորերդ ըրիցին տամ:
Շորերդ հագիցդ հանես:
Ոչ ճոչըլնաս:
Ոչ մխիթարվես:
Ոչ յաշամիշ:
Ոչ սրտղվիս:
Ոչ ու փուչ:
Որբևվերի մնաս:
Որդու թուշ չպաչես:
Որյագին նստես, գնաս ժամը:
Ով ապրուստի փափագ ունենա, դու մահ ուզենաս:
Ոտիս տակի հողը ըլնես:
Չարալամիշ ըլնես:
Չար աչքդ փուշ մտնի:
Չար Նապարը քեզ տանի:
Չոլերն ընգնես:
Չոռ ու ցավ:
Չվանով կապոտեմ քեզ:
Չորանաս:
Չորանաս դու, վերջանաս դու, արմատըդ կտրվի:
Չորանաս, չորացած մնաս:
Չոր քարին նստես:
Չունենամ քեզ:
Պատանըդ կարեմ:
Պատերի տակ մեռնես:
Պատեպատ ման գաս:
Պըռճըկվիս:
Պլոկվին սրանք:
Ջանդամը էթաս:
Ջանդաքդ դուրդուղուշերն ուտեն:
Ջանիդ խերը չտենաս:
Ջանիդ վրա տեսիլք տենաս:
Ջիգյարըդ կրակ ընկնի:
Ջիգյարըդ դաղվի:
Ջրի նման քարեքար ընգնես:
Սաթայելի ծոցը մտնես:
Սատանի փայ դառնաս:
Սարաթափ ըլնես:
Սար ու չորեր անց կենաս, լավ օրի կարոտ մնաս:
Սևավոր:
Սև խաբարդ առնիմ:
Սև կապես:
Սեղանին մնաս:
Սև հողի տակը գնաս:
Սևերից դուս չգաս:
Սևերես:
Սևերես մնաս:
Սև թուղթդ գա:
Սիրտդ սևանա:
Սրտամեռ:
Սունքսունդ կոտրի:
Վայկյան ախպուրն էթաս՝ ջուրը ցամաքի:
Վայ կըռծակված, պըռճըկվիս, շորերըդ հագիցդ հանես, չոլերումը վակ տաս:
Վայ տամ նրանց գլխին:
Վա՜յ, քոռ մահը քու բուգը բռնի:
Վա՜յ, քու մավըդ կտրվի, սև հողի տակը գնաս:
Վանքի գրվես (մենակ ապրես):
Վիզդ կոտրի:
Տանըդ անասունը կտրվի:
Տանըդ սուրրը քեզնից խռով կենա:
Տանըդ տեղը կարտոփ ցանեն:
Տանըդ տեղը սխտոր ցանեմ:
Տափը մտնես:
Տունըդ ակորի մնա, տեղը գարի ցանեմ:
Տունըդ ավերվի:
Տունըդ վառվի:
Տունըդ վրեդ փլվի:
Տունըդ քանդվի, դուռը շարվի:
Տուն ու տեղըդ մոխիր դառնա:
Տեղըդ դարդակ մնա:
Տիրամոր յարեն թափի վրեդ:
Տկլոր ջանիդ ցախ շալակես:

Տկլոր ջանիդ կատու շալակես:
Տղամարդ մեռնես:
Տղի երես տեսնես ոչ:
Տղի թուշ պաչես ոչ:
Տասը տեսակ չեն հանես:
Տո բալամեռ:
Տո հերամեռ:
Տոները մնաս:
Տրաքվես:
Ցամաք հայի կարոտ մնաս:
Ցանես, ցանես, դարդակ նստես:
Ցավը ջանրդ անպակաս ըլնի:
Ցավս ուտես:
Ցեղդ կտրվի:
Ցեղդ չորանա:
Ումբր ու արևըդ մարի:
Ուտածդ փորեդ դուս չգա:
Ուտես:
Ուր գնաս, ուդ քարին առնի:
Փաթլամիշ ըլնես:
Փորըդ կշտանա ոչ:
Փորըդ լիքը անենաս, կող ու կուշտդ՝ դարդակ:
Փորինդ դանակներով հանես:
Փորչանքը գլխիդ անպակաս ըլնի:
Փչանաս:
Քամբախ ըլնի տուն ու տեղըդ:
Քար կտրես:
Քար դառնաս:
Քարեքար ընգնես:
Քաղցր գնրեզմանի կարոտ մնաս:
Քեզ տենամ գյուլախորով ըլնես, մերըդ վրեդ մազերը փետի:
Քոռանա լուսըդ:
Քոռ գրողի փայ դառնաս:
Քոռ եթիմ մնաս:
Քթեմեդ թարսփ, արին գա:
Քթեմեդ ծուխը վեր էլնի:
Քոռ մահը քու բուգը բռնի:
Քոս ընգնես, եղունգ չունենաս:
Քոքդ կտրվի:
Քրքրվես, միսըդ վրայեդ թափի:
Քու բերողը խորը գնա:
Քու մինը ոչ էրկու դառնա:
Օձը կծի քեզ:
Օձի բնին նստես:
Օձի պես սողաս:
Օջախիդ մուխը մարի:
Օրըդ ախ ու վախով անցնի:
Օրվա հացի կարոտ մնաս:
Օր ու արև չունենաս:
Օր-ումբըրըդ սև, մութ ըլնի:
Օրօրոցդ դարդակ մնա:

## ՍՊԱՌՆԱԼԻՔ

Աննամուս, գիդա՞ս, թե ում հետ գործ ունես:
Բեդովլաթ, որ բռնել եմ, անգաճներդ կպոկեմ:
Ես իմ հոր տղեն չեմ ըլի, որ քու հախիցը չգամ:
Ես սաղ չպիտի ըլնեմ, որ արածըդ մարսես:
Էնպես կսամ, որ ոչ ասս, ոչ առնես:
Էնքան մեռա՞ծ եմ, որ դու ես վրես խոսում:
Թե մարսեցիր, պարծեցիր:
Թխսի բիիր*, դու էլ ես խոսո՞ւմ, թոզդ քամուն կտամ:
Թողեք, մի դրա հախիցը գամ:
Լեզուդ քոքից կհանեմ:
Կայնի, էդ ո՞ւչ ասիր:
Մեկ ա, ձեռիցս չես պրծնի:
Միրուքդ կփետեմ:
Ծանսատակ կանեմ:
Չուլ ու փալասըդ կրակ կտամ, կվառեմ:
Սաղ տեղըդ անգաճըդ կթողնեմ:
Տո դուզդուն, հլա կանգ առ:
Տո քոփակօղլի, աեղումըդ կաց, թե չէ ընենց քոթակ կտամ՝ շունը ձեռիցդ հաց վեր չի ունի:

* Կարճահասակ: